

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

Թեմա՝ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԸ

Առարկա՝

Աշխարհագրություն

Ուսուցչուհի՝

Գեղեցիկ Պողոսյան

Ղեկավար՝

Արմեն Հայրապետյան

ԳՅՈՒՄՐՈՒ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
-------------------	---

ԳԼՈՒԽ 1

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ.....	5
--------------------------	---

1.1 Շիրակի մարզի ընդհանուր բնութագիրը.....	5
--	---

1.2 Շիրակի մարզի գյուղատնտեսության զարգացման բնառեսուրսային ներուժը.....	9
---	---

ԳԼՈՒԽ 2

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԸ.....	16
--------------------------	----

2.1 Շիրակի մարզի գյուղատնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը.....	16
---	----

2.2 Շիրակի մարզի գյուղատնտեսությունը ՀՀ աշխատանքի աշխարհագրական բաժանման համակարգում	20
---	----

2.3 Շիրակի մարզի գյուղատնտեսության զարգացման հեռանկարները.....	22
--	----

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	30
---------------------	----

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	32
------------------------------------	----

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չնայած վերջին հազարամյակում տնտեսության մյուս սեկտորների անհամեմատ արագ զարգացմանը, գյուղատնտեսությունը մնում է հասարակական կենսագործունեության կարևորագույն և անփոխարինելի ոլորտը: Անկախ իր զարգացվածությունից գյուղատնտեսությունը ցանկացած երկրում համարվում է բնակչության պարենամթերքով ապահովման առաջնային ճյուղերից մեկը և այդ պատճառով այս ոլորտի զարգացումն ու հետևողական աշխատանքների իրականացումը շատ մեծ կարևորություն ունի: Գյուղատնտեսական արտադրության զարգացման նպատակն է բավարարել գյուղատնտեսական մթերքների նկատմամբ բնակչության և գյուղատնտեսական հիմքի բազայի վրա աշխատող արդյունաբերական ձեռնարկությունների աճող պահանջմունքները: Աշխատանքի փորձ ենք կատարելու բացահայտել ՀՀ Շիրակի մարզի գյուղատնտեսության զարգացման հեռանկարները, դրանք դիտարկելով ինչպես մարզի, այնպես էլ հանրապետության զարգացման համատեքստում:

Ակնհայտ է, որ պարենային անվտանգության տեսակետից գյուղատնտեսական ներուժի բացահայտման ցանկացած քայլ խիստ արդիական է, անկախ ժամանակի առաջնահերթություններից: Հենց այս տրամաբանությունն էլ ընդգծում է սույն աշխատանքի արդիականությունը, որի կարևորությունն ընդգծվում է նաև մի շարք օբյեկտիվ հանգամանքներով՝ պատերազմի ռեալ վտանգ, տրանսպորտային շրջափակում և Շիրակի մարզի կարևոր դերակատարություն՝ հանրապետության գյուղատնտեսության դիմագծում:

Աշխատանքի նպատակն է վերլուծել և գնահատել Շիրակի մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման ժամանակակալից հիմնախնդիրները և մատնանշել դրանց լուծման հնարավոր տարբերակները: Այս նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Շիրակի մարզի գյուղատնտեսության ոլորտի ճյուղային և տարածքային կառուցվածքի վերլուծություն:
- Շիրակի մարզի գյուղատնտեսության զարգացման բնառեսուրսային ներուժի գնահատում:

- Շիրակի մարզի գյուղատնտեսության գնահատում՝ ՀՀ աշխատանքի աշխարհագրական համակարգում:
- Շիրակի մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման նախադրյալների բացահայտում և դրա լուծման առաջադրում:

Հետազոտական խնդիրների լուծման համար օգտագործել ենք ինչպես բուն աշխարհագրական, այնպես էլ՝ համագիտական մեթոդներ: Մասնավորապես աշխատանքում կիրառել ենք համեմատա-աշխարհագրական, գիտական, նկարագրության, վերլուծության, համադրման և գիտական կանխատեսման մեթոդները:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից և և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ

1.1 Շիրակի մարզի ընդհանուր բնութագիրը

ՀՀ Շիրակի մարզը գտնվում է հանրապետության հյուսիս-արևմտյան հատվածում, իսկ հայկական լեռնաշխարհի ծայր հյուսիս-արևելյան հատվածում [12]:

Շիրակի մարզի սահմանների ընդհանուր երկարությունը կազմում է 337կմ, որից 162կմ-ը արտաքին սահման է հանդիսանում, իսկ 175կմ-ը՝ ներքին: Մարզը հյուսիսում սահմանակից է Վրաստանին, իսկ արևմուտքում՝ Թուրքիայի Հանրապետությանը: Արևելքում Շիրակի մարզը սահմանակցում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզին, իսկ հարավում և հարավ-արևելքում սահմանակից է ՀՀ Արագածոտնի մարզին: Մարզի ընդհանուր տարածքը 2680կմ² է, քաղաքային համայնքները 3-ն են՝ Գյումրին, Արթիկը և Մարալիկը: Մարզկենտրոնը **Գյումրին** է: Հանրապետության երկրորդ քաղաքն է Երևանից հետո:

Բնակչությունը՝ 157.332 մարդ: Հանրապետության երկրորդ քաղաքն է; Հեռավորությունը մայրաքաղաքից 126 կմ է: Տարածքը 3626 հա, ծովի մակարդակից բարձր է 1500մ: Գյումրին քաղաքի կարգավիճակի ունի 1840 թ.: Հնում այն կոչվում էր Կումայրի, հետագայում անվանվել է Ալեքսանդրապոլ, Լենինական, իսկ Հայաստանի անկախացումից հետո վերանվանվել է քաղաքի պատմական անվանումը՝ Գյումրի:

Գյումրին ունի հզոր մշակութային կոլորիտ: Հնուց ի վեր եղել է արվեստների և արհեստների քաղաք: Քաղաքը հարուստ է պատմամշակութային և հնագիտական հուշարձաններով: Այս առումով կարևորվում է Գյումրի քաղաքի «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի դերը: Գյումրին այն եզակի քաղաքներից է որրտեղ ճարտարապետները աշխատել են պահել ու պահպանել Գյումրվա ուրույն ճարտարապետությունը, որի հիմքում ընկած է Անիի և Կարսիի ճարտարապետական ոճերը: Գյումրին համարվում է արհեստների քաղաք, զարգացած է ճարտարապետությունը, քարագործությունը, փայտագործությունը, արծաթագործությունը, ոսկերչությունը, պղնձագործությունը, գորգագործությունը, ժանյակագործությունը, երկաթագործությունը [11]: Մի քանի անգամ խիստ ավերվել է երկրաշարժերից: Վեր-

ջին անգամ Գյումրին ավերվել է 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած աղետալի երկրաշարժից: Այժմ այն վերականգնում է: Քաղաքը հանդիսանում է տրանսպորտային հանգույց, գործում է նաև «Շիրակ» օդանավակայանը:

Արթիկը մարզի երկրորդ խոշոր քաղաքն է: Բնակչությունը կազմում է 20.278 մարդ: Քաղաքի կարգավիճակ ունի 1945թ.: Մարզկենտրոնը Գյումրիից 20 կմ հարավ-արևելք է գտնվում, իսկ Երևանից՝ 105կմ հյուսիս-արևմուտք: Ծովի մակերևույթից 1750մ բարձրության վրա է գտնվում, իսկ տարածքը 7կմ² է զբաղեցնում: Արթիկը հանդիսանում է տուֆագործների քաղաք: Հանրապետության տուֆ արդյունահանող խոշորագույն կենտրոնն է:

Մարզի երրորդ քաղաքը **Մարալիկն** է: Քաղաքի բնակչությունը կազմում է 5500 մարդ: Մարզկենտրոնից գտնվում է 27 կմ հարավ, իսկ Երևանից գտնվում է 97 կմ հեռավորության վրա: Մակերեսը՝ 4.06կմ² է: քաղաքի կարգավիճակ ունի 1995 թ.: Նշանավոր է որպես շինանյութերի (տուֆի, պեմզայի), թեթև ու սննդի արդյունաբերության կենտրոն [12]:

Շիրակի մագրում գյուղական բնակավայրերը 128-ն են: 2016 թ. նոյեմբերից տեղի է ունեցել համայնքների խոշորացման գործընթացը: Շիրակի մարզի համար տնտեսաշխարհագրական կտրվածքով արտահայտիչ բացասական ազդեցություն ունի նրա հեռու գտնվելը ծովերից, այս հանգամանքը հատուկ է ամբողջ հանրապետությանը: Այս պատճառով մարզը (նաև հանրապետությունը) զրկված է արտաքին հաղորդակցության այդ էժան ու հարմար միջոցից և կենսաբանական ու ռեկրացիոն ռեսուրսների վիթախարի շտեմարանից: Որպես բացասական գործոն կարելի է ընդգծել նաև մարզի եզրային դիրքը հանրապետությունում: Այն լրացուցիչ խոչընդոտներ է հարուցում հանրապետության մյուս ծայրամասային մարզերի հետ ակտիվ առևտրա-տնտեսական հարաբերությունների հաստատման համար:

Դրական նախադրյալ է այն, որ Շիրակի մարզը երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհներով կապված է ինչպես իր անմիջական հարևան մարզերի, այնպես էլ հանրապետության մայրաքաղաքի՝ Երևանի հետ: Շիրակի մարզի տնտեսաշխարհագրական և քաղաքաշխարհագրական դիրքի կարևոր առանձնահատկությունն է նրա հարևանությունը արտասահմանյան 2 պետությունների: Այս գործոնը կարևոր է նաև ամբողջ հանրապետության համար և ունի մեծ ներուժ:

Տրանսպորտաշխարհագրական տեսանկյունից կարելի է արձանագրել, որ մարզի տարածքով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և ավտոճանապարհը, վերջինիս միջոցով մարզը (հետևաբար նաև հանրապետությունը) ելք են ստանում դեպի Սև ծով՝ Եվրոպա, իսկ այս հանգամանքը արդեն մարզի տնտեսաշխարհագրական դիրքին լուրջ դրական ազդեցություն է հաղորդում:

Ֆիզիկաշխարհագրական տեսակետից մարզի տարածքը Շիրակի լեռնաշղթայով բաժանված է երկու մասի: Հարավային մասը զբաղեցնում է Շիրակի դաշտը, իսկ հյուսիսային մասը Աշոցքի համեմատաբար բարձրադիր սարահարթը (2000մ): Ընդհանուր առմամբ մակերևույթը հարթ է, թույլ կտրտված, ծածկված է հրաբխային և նստվածքային ապարներով:

Մարզի հարավարևելյան մասում վեր է խոյանում Արագածի լեռնագանգվածը, որի գագաթը (4090մ) հանրապետության ամենաբարձր կետն է: Այստեղ իրար զուգահեռ արևմուտքից արևելք ձգվում են Շիրակի լեռնաշղթան և Փամբակի ու Բազումի լեռնաշղթաների արևմտյան մասերը: Հյուսարևելյան մասում հյուսիսից հարավ ձգվում է Զավախքի լեռնաշղթան, որի բարձր գագաթը Աչքասար լեռն է (3196մ), իսկ հյուսիսարևմտյան մասում՝ Եղնախաղի լեռնաշղթան (3042 մ): Մարզը բնութագրվում է ցամաքային կլիմայով, ձմեռը սաստիկ ցուրտ է, ձյունը ունենում է մեծ հզորություն:

Ի դեպ հենց այս մարզում է գրանցվել հանրապետության բացարձակ նվազագույն ջերմաստիճան -46°C : Այն գրանցվել է մարզի հյուսիսարևելյան մասում՝ Արփի լճի ափին գտնվող Պաղակն (նախկին Շուրաբաղ) գյուղում:

Մարզի տարածքի հարավային և հյուսիսային մասերի միջև կլիմայական մեծ տարբերություններ կան: Հարավում ամառը նույնիսկ տաք է, իսկ հյուսիսում (Աշոցքի սարահարթում) զով է լինում: Նշված լեռների բարձրադիր վայրերը տարվա մեծ մասը ծածկված են ձյունով:

Մարզի տարածքի մեծ մասը ծածկված է լեռնային սևահողերով, որոնք և հանդիսանում են հանրապետության հացահատիկային մշակաբույսերի աճեցման կարևորագույն բազա: Լեռնային բարձրադիր մասերում տարածված են լեռնամարգագետնային հողերը: Այդ վայրերն էլ բնութագրվում են խոտային բազմազան բուսականությամբ, բարձրադիր մասերում լեռնամարգագետնային բուսականության տեսակներով: Շիրակի մարզի տարածքով հոսում է Ախուրյան գետը, որը մարզի հարավարև-

մտյան մասում դառնում է սահմանային գետ (Թուրքիայի հետ), որտեղ էլ կառուցված է հանրապետության ամենախոշոր՝ Ախուրյանի ջրամբարը: Վերջինս ունի տնտեսական խոշոր նշանակություն, հատկապես ոռոգման համար: Արագածի լանջերից սկիզբ է առնում Ախուրյանի վտակ Մանթաշ գետը, որի վրա կառուցված է ջրամբար: Իսկ մարզի հյուսիս-արևմտյան մասում է Արփի-լիճ ջրամբարը, որով անցնում է Ախուրյան գետը: Դրա նշանակությունը նույնպես մեծ է ոռոգման, որոշ չափով նաև ձկնաբուծության համար:

Շիրակի մարզի համար շատ կարևոր դեր է խաղում Շիրակի ջրանցքը, որն անց է կացված Ախուրյան գետից և Գյումրի քաղաքի արևելյան մասով հասնում է մինչև Մանթաշ գետը: Հենց այս ջրանցքի վրա էլ 1930-ական թթ. կառուցվել է հիդրոէլեկտրակայան:

Շիրակի մարզի տարածքի երկրաբանական կառուցվածքի բազմազանության շնորհիվ բազմազան են նաև ընդերքի հարստությունները:

Մարզում լայն տարածում ունեն տուֆը, պեմզան, բազալտը, անդեզիտը, կրաքարը, պեռլիտը, հրաբխային խարամն ու մոխիրը, զանազան կավերը և շատ ուրիշ շինանյութեր: Շինանյութերի մեջ առաջնակարգ նշանակություն ունի տուֆը, որի պաշարներով հանրապետության մարզերի մեջ գրավում է առաջին տեղը: Շիրակի մարզում առավել հայտնի են Արթիկի, Անիպեմզայի, Պեմզաշենի և Գյումրիի տուֆի հանքավայրերը: Պեմզայի պաշարները մարզում գնահատվում են շուրջ 100միլիոն մ³:

Մարզի տարբեր շրջաններում կան պեռլիտի, օբսիդիանի, հրաբխային խարամի, ավազիբազալտի, անդեզիտի պաշարներ, որոնք շահագործվում և օգտագործվում են հիմնականում մարզի սահմաններում:

Բազմապիսի կավերի և դիատոմիտների պաշարներ կան մարզի տարբեր շրջաններում:

Շիրակը հայտնի է նաև արդյունաբերական նշանակություն ունեցող կրաքարի պաշարներով:

Ախուրյանի տարածաշրջանի ամբողջ տարածքը սեյսմատեկտոնական տեսանկյունից (համեմատած հանրապետության տարածքի հետ) գտնվում է բարձր սեյսմիկ ռիսկի գոտում: Գյումրի քաղաքը գտնվում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտում:

Բնական աղետներից առավել վտանգ են ներկայացնում երկրաշարժերը, սողանքները, սելավները, գարնանային վարարումների հետևանքով առաջացած ջրհեղեղները, ուժեղ քամիները, կարկուտը, ցրտահարությունը, մերկասատույցը, ձնաբուքը, սահքերն ու երաշտները:

1.2 Շիրակի մարզի գյուղատնտեսության զարգացման բնառեսուրսային ներուժը

Տարածքը հանդիսանում է միավորող ընդհանրացնող բնական ռեսուրս: Այն իր ոչ միայն երկրաչափական այլև ֆիզիկաշխարհագրական հատկանիշներով հանդերձ էապես ազդում է հասարակական արտադրության տարածքային կազմակերպման վրա: Առանց բացառության տնտեսության բոլոր ճյուղերը ավել կամ պակաս չափով «զգայուն» են տարածքի ռելիեֆային պայմանների նկատմամբ [10]:

Տնտեսության վրա ռելիեֆն ունի անմիջական և միջնորդված ազդեցություն [8], որը հիմնականում դրսևորվում է բարձրաչափության և լանջերի թեքության միջոցով: Իսկ միջնորդված ազդեցությունը՝ կլիմայական, ջրաբանական և հողաբուսական ծածկույթի միջոցով: Բարձրաչափական գոտիների ազդեցությունը կարևոր են, քանի որ ըստ բարձրության փոխվում են բնական համալիրները՝ բնական պայմաններն ու ռեսուրսները: Բարձրաչափական գոտիները սահմանափակում են մշակովի բույսերի տարածման սահմանները:

Օրինակ տեխնիկական մշակաբույսերից շաքարի ճակնդեղի և ընդհանրապես բանջարանաբոստանային կուլտուրաների զարգացման համար բավարար պայմաններ առկա են միջև 2000-2100մ բարձրություններում, իսկ լավագույն պայմանները սահմանափակվում են միջև 1600մ բարձրաչափական գոտիներում: Մարզի հիպսոմետրիկ գլխավոր առանձնահատկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տարածքի 95 %-ը ընկած է ծովի մակարդակից 1500մ-ից ավելի բարձրության վրա: Այս ցուցանիշը վկայում է, որ Շիրակի մարզում հասարակական կյանքի կազմակերպման համար ՀՀ աշխարհագրական լայնություններին բնորոշ առավել բարենպաստ պայմանները բացակայում են: Տարածքի 43 %-ը զբաղեցնում է 1500-2000մ բարձրաչափական գոտին: Տարածքի այս հատվածի համեմատական գնահատականը, մարդու կյանքի և հասարակական արտադրության կազմակերպման տեսակետից բնու-

թագրվում է բարենպաստ: Դա է վկայում նաև մարզի բնակչության տեղաբաշխումը, քանզի բնակչության 90%-ը կենտրոնացված է տարածքի հենց այս հատվածում:

Շիրակի մարզի տարածքի մնացյալ մասը ընկած է ծովի մակարդակի նկատմամբ 2000մ-ից ավելի բարձրության վրա: Այստեղ ընդհանուր պայմանները գնահատվում են որպես անբարենպաստ: Մասնավորապես, Շիրակի մարզի տարածքի 37%-ը ընկած է 2000-2500մ բացարձակ բարձրության վրա: Այստեղ բնակլիմայական պայմանները աչքի են ընկնում խստությամբ: 2500մ-իվ ավելի բացարձակ բարձրություններում (մարզի տարածքի 15%-ը), մարդու կյանքի և հասարակական արտադրության պայմանները գնահատվում են ծայրահեղ անբարենպաստ [5]:

Տարածքային կազմակերպման վրա մեծ ազդեցություն ունեն նաև տարածքի թեքությունները, որոնք նշանակություն ունեն տնտեսության բոլոր ճյուղերում, բայց առավել մեծ նշանակություն ունեն՝ գյուղատնտեսության մեջ և տրանսպորտում: Շիրակի մարզում կարելի է սահմանազատել հետևյալ տեղանքները [8]՝

1. 0-3⁰ թեքություն ունեցող հարթ տեղանքներ, որոնց ընդհանուր մակերեսը մարզում կազմում է 1390 կմ² (մարզի տարածքի 51,9 %-ը): Նման հարթ տեղանքով աչքի են ընկնում Շիրակի դաշտը և Աշոցքի գոգավորության հարթահատակ մասը: Այս տարածքում պայմանները գնահատվում են որպես առավել բարենպաստ:
2. 3 -7⁰ թույլ թեքության տեղանքներ, որտեղ պայմանները ընդհանուր առմամբ գնահատվում են որպես բարենպաստ: Այսպիսի թեքություն ունեցող տարածքները զբաղեցնում են 1216 կմ² (մարզի տարածքի 35%-ը), և ընդգրկում է Շիրակի դաշտի նախալեռները, Արթիկի, Շարայի, Ամասիայի հրաբխային սարավանդները:
3. 7 -12⁰ փոքրաթեք տեղանքներ: Ջբաղեցնում են մարզի տարածքի 10,5%-ը և ընդգրկում են Եղնախաղի, Արագածի և Ջավախքի հրաբխային լեռնավահանները: Տարածքի այս հատվածներում հասարակական արտադրության արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ են լրացուցիչ միջոցառումներ:
4. 12⁰ բարձր թեքություն ունեցող տեղանքներ, որոնք զբաղեցնում են մարզի տարածքի 3%-ը: Այս գոտում տեղանքի թեքության աստիճանի ավելացմանը զուգահեռ սահմանափակվում է հասարակական արտադրության տարածքային տեղաբաշխումը: Այս տեսանկյունից վերոհիշյալ թեքություն ունեցող տարածքները գնահատվում են որպես անբարենպաստ:

Ամփոփելով Շիրակի մարզի ռելիեֆային պայմանների բնութագրությունը, կարող ենք արձանագրել, որ այստեղ հասարակական կյանքի տարածքային կազմակերպման համար նպաստավոր պայմաններ կան տարածքի մասնավորապես 35 %-ում (875կմ²), որտեղ հիպսոմետրիկ բարձրությունները չեն գերազանցում 2000մ-ը, իսկ մակերևույթի թեքությունները 7⁰-ը:

Տարածքային կազմակերպման վրա կլիման ազդում է օդերևութաբանական տարրերի միջոցով, ուստի և Շիրակի մարզի կլիմայական պայմանների և ռեսուրսների որակական գնահատումը կփորձենք կատարել այդ տարրերի՝ օդի, ջերմության, մթնոլորտային տեղումների, քամու ազդեցության վերլուծության հիման վրա:

Շիրակի մարզում միջին տարեկան նվազագույն ջերմաստիճանը 1,8⁰ է (Պաղակն): Ինչ վերաբերում է բացարձակ ջերմաստիճաններին, ապա առավելագույնը դիտվել է Գյումրի դիտակետում (+36⁰), իսկ նվազագույնը՝ Պաղակնում (-46⁰): Բացարձակ ջերմաստիճանի լայնույթը հավասար է 82⁰: Կլիմայի բաղադրիչներից արտադրական կարևոր նշանակություն ունի (հատկապես գյուղատնտեսության համար) անսառնամանիք ժամանակամիջոցը: Մարզի երկրագործական շրջաններում գարնանային ցրտահարությունները դադարում են մայիսի կեսերից (1400մ բարձրություններում), մինչև հունիսի վերջերին (2200մ բարձրությունները):

Վաղ աշնան ցրտահարությունները ցածրադիր գոտիներում սկսվում են հոկտեմբերի սկզբներին, իսկ բարձրադիր գոտիներում՝ մեկ ամիս շուտ:

Մարզի ցածրադիր վայրերում անսառնամանիք օրերի թիվը հասնում է մինչև 160 օր: Մարզի հյուսիսային շրջաններում այդ թիվը տատանվում է 90-120 օր միջակայքում: Իսկ նվազագույն տևողությունը դիտվել է Արագածի բարձր լեռնային կայանում՝ 60 օր [9]:

Ցրտահարությունների պատճառով Շիրակի դաշտում, որը մարզի երկրագործության գլխավոր կենտրոնն է, վեգետացիոն շրջանի ջերմության մի մասը բույսերի կողմից չի օգտագործվում:

Այսպես օրինակ, գարնանը որոշակի ջերմություն օգտագործելուց հետո բույսերը ցրտահարվում են, իսկ աշնանը ցրտահարվելով՝ չեն օգտվում հաջորդ 10-15 տաք օրերի ջերմությունից:

Արտադրության վրա կլիմայի կոմպոնենտներից մեծ ազդեցություն ունի նաև օդի միջին օրական ջերմաստիճանների 0⁰-ից անցնելու ժամկետները 0⁰-ից բարձր միջին օրական ջերմաստիճանը, որոնց դեպքում բույսերի աճի ու զարգացման համար նպաստավոր պայմաններ կան: Մարզի կենտրոնական շրջաններում 0⁰-ից միջին օրական ջերմաստիճանները տևում են 7 ամիս (ապրիլից մինչև դեկտեմբեր): Դեպի լեռնային շրջանները այդ ժամանակահատվածը կրճատվում է 5 ամիս (մայիսից-նոյեմբեր):

Շիրակի մարզը ընդհանրապես չորային շրջան է: Տեղումների միջին քանակը հավասար է 470մմ: Խոնավացման տեսակետից Շիրակի մարզը հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք բաժանվում է 3 մասի [5]:

Դրանք համապատասխանաբար ստանում են 300-5000մմ, 500-700մմ և 700մմ ավելի տեղումներ: Բնականաբար գոլորշիացումն է նվազում հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք:

Շիրակի մարզի ամենախոնավ շրջանը Ախուրյանի գոգավորությունն է (600-700մմ): Գյուղատնտեսության համար կարևոր նշանակություն ունի տեղումների տարեկան բաշխվածությունը և ինտենսիվությունը: Մասնավորապես օրվա ընթացքում 5մմ-ից պակաս տեղումները մշակաբույսերի ջրամատակարարման գործում լուրջ դեր չեն խաղում: Շիրակի մարզում 5մմ-ից պակաս տեղումներով օրերի թիվը հասնում է 95-ի, իսկ 5մմ-ից ավելի՝ 35 օր, ընդ որում այդ 35 օրերից վեգետացիոն շրջանում դիտվում է 24 օր:

Ընդհանուր առմամբ վերոհիշյալ ցուցանիշները ընդգծում են մարզում արհեստական ոռոգման անխուսափելիությունը: Գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է հաշվի առնել կլիմայական գործոնի ազդեցությունը: Շիրակի մարզի ջրագրական առանձնահատկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տարածքը հեռու լինելով ծովերից, ունի միայն ցամաքային ջրային ռեսուրսներ, կազմված 3 բաղադրիչներից՝ գետային հոսքից, ստորերկրյա ջրերից և կուտակված պաշարներից:

Շիրակի մարզում ջրային ռեսուրսների հաջորդ առանձնահատկությունը ջրագրական չափի անհամաչափ տեղաբաշխվածությունն է մարզի հյուսիսային շրջաններում (Վերին Ախուրյան գոգավորություն), որտեղ ոռոգման կարիք չի զգացվում, ջրա-

գրական ցանցը լավ է զարգացած: Իսկ հարավում, որտեղ ռոռզման անհրաժեշտություն կա, ջրերը չափազանց սակավ են: Ջրային ռեսուրսների անհամաչափ տեղաբաշխվածության պատճառով մարզում կառուցված են ջրամբարներ: Մասնավորապես Ախուրյանի ակունքների մոտ 10մ բարձրությամբ պատվարի կառուցումը հնարավորություն տվեց Արփի լիճը վերածելու ջրամբարի, հետևաբար մեծացնելու լճի մակերեսը և կուտակելու գարնանային ու աշնանային ազատ ջրերը՝ 60-100մլն մ³:

Մանթաշ գետի վրա կառուցված ջրամբարը կարող է կուտակել 8 մլն մ³: Իսկ Ախուրյանի միջին ավազանում կառուցված ամբարտակը հնարավորություն է տալիս կուտակելու միջև 550մլն մ³ ջուր: Մարզում ռոռզման սեզոնին առաջացող ռոռզման ջրային ռեսուրսների պակասուրդը մասամբ հաղթահարվում է նաև ի հաշիվ Կապսի (60մլն մ³), Կառնուտի (22մլն մ³), Սառնաղբյուրի (4,5մլն մ³), Հոռոմի (5մլն մ³) ջրամբարներում ամբարված ջրային պաշարները:

Մարզի ջրրային պաշարների մեջ էական դեր են խաղում նաև արտեզյան ջրերը և բազմաթիվ աղբյուրներ: Մեր մարզում արտեզյան ավազանը գտնվում է Շիրակի դաշտում և զբաղեցնում է մոտ (300-320 կմ²) տարածք: Ջրատար հորիզոնները սնվում են Շիրակի դաշտը եզրափակող լեռնաշղթաներից ներծծվող մթնոլորտային և մակերևույթային ջրերից: Շիրակի արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերը անուշահամ են և պիտանի խմելու համար, ունեն մեծ պաշարներ և լայն հեռանկարներ ջրամատակարարման բնագավառում:

Գյուղատնտեսության մեջ կարևոր նշանակություն ունեն նաև հողային ռեսուրսները: ՀՀ տարածքում առանձնացված հողերի 15 տիպերից Շիրակի մարզում առավել տարածում ունեն 3-ը, որոնց տարածումը մարզում ենթարկվում է ուղղաձիգ գոտիականության [5]:

- Լեռնամարգագետնային հողեր
- Մարգագետնատափաստանային հողեր
- Լեռնային հողեր

Մարզի հողային ֆոնդի 90%-ը զբաղեցնում են սևահողերը, որոնք տարածվում են Շիրակի դաշտում, Աշոցքի գոգավորությունում, այսինքն երկրագործության հիմնական շրջաններում:

Հողերի այս տիպը աչքի է ընկնում համեմատաբար բարձր բերիությամբ, գիպսի բացակայությամբ, կաավազային կամ թեթև կավային մեխանիկական կազմով, սակայն համեմատաբար աղքատ են բույսերի համար մատչելի ազոտով և ֆոսֆորով, դրա համար էլ բերիության բարձրացման, ինչպես նաև մշակվող կուլտուրաների կենսաբանական պահանջներին համապատասխան նպատակահարմար է հողերի այս տիպի պարաստացումը ֆոսֆորով և ազոտով:

Պետք է նկատել, որ տեղանքի թեկուզև փոքր բարձրացումները փոխում են սևահողերի բնույթը՝ նրանց հզորությունը փոքրանում է, հումուսի պարունակությունը նվազում, իսկ մեխանիկական կազմը դառնում ավելի թեթև: Այս պատճառով էլ մարզի տարածքում լեռնային սևահողերի օգտագործումը երկրագործության մեջ առավելագույն արդյունք է ապահովում բուն Շիրակի դաշտում, որտեղ կան նաև նպաստավոր ազդակլիմայական պայմաններ: Նպատակահարմար է հացահատիկային կուլտուրաների (հատկապես ցորենի), շաքարի ճակնդեղի, բանջարեղենի, ծխախոտի մշակումը:

Հողերի հաջորդ տիպերը՝ լեռնամարգագետնային և մարգագետնատափաստանային հողերը մարզում մեծ տարածք չեն զբաղեցնում (5-7%):

Մասնավորապես լեռնային մարգագետնատափաստանային հողերը տարածում ունեն միայն Արագածի արևմտյան լանջերին (մինչև 2400մ բարձրությունը), ունեն ծանր մեխանիկական կազմ և հումուսի բարձր պարունակություն (8-13%): Համեմատաբար հարմար է հացահատիկների (հատկապես գարու) և որոշ խոտաբույսերի մշակման համար: Լեռնային մարգագետնային հողերը մարզում տարածվում են Եղնախաղի, Ջավախքի և Արագածի բարձր լեռնային գոտիներում (2400մ-ից բարձր): Ուժեղ խոնավացման և ցածր ջերմաստիճանների պայմաններում հողերի այս տիպին բնորոշ են ճմային հողայացման փուլը և հումուսանյութերի մեծ կուտակումը: Այս տիպի հողերը երկրագործության մեջ գրեթե չեն օգտագործվում, բայց սրանց էլ բաժին ընկնում ամառային արոտավայրերի և խոտհարքների մեծ մասը:

Բացի նշված հողային տիպերից, մարզում տարածված են նաև ճահճամարգագետնային, ճահճային և հետանտառային դարչնագույն հողերը, որոնց վրա ձևավորված են բարձրորակ խոտհարքները [6]:

Շիրակի դաշտը եզրավորող բարձրունքները՝ Շիրակի շղթայի Չառիթափ լանջերը և Ջաջուռի բարձրունքների լանջերը հողածածկույթից համարյա զուրկ են:

Շիրակի մարզում տիրապետող հիմնական բուսածածկույթը տափաստանայինն է: Այն տարածվում է Շիրակի դաշտում և Աշոցքի բարձրադիր հարթությունում: Առաջինում գերակշռում են հացազգիների և տարախոտային տափաստանները, որոնց կազմում որոշիչ դերը պատկանում է փետրախոտին: Աշոցքի հարթությունում տարածված են մարգագետնային տափաստանները: Ամփոփելով հողային և բուսական ռեսուրսների համառոտ բնութագիրը առանձնացրել ենք հետևյալ առանձնահատկությունները: Մարզի հողային ռեսուրսների կառուցվածքում լեռնային սևահողերը լավագույնն են հողագործության զարգացման համար: Իսկ մյուս հողերի բերիության բարձրացման համար անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ ագրատեխնիկական միջոցառումներ: Ալպյան մարգագետնիների տարածումը մարզի հյուսիսային և հարավարևելյան շրջաններում նպաստավոր պայմաններ է ստեղծում անասնապահական ճյուղի զարգացման համար:

ԳԼՈՒԽ 2

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԸ

2.1 Շիրակի մարզի գյուղատնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը

Մարզի գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում առաջատարը բուսաբուծությունն է [13], որի արտադրանքն օգտագործվում է տարբեր նպատակներով, առավելապես, որպես պարենամթերք, անասնակեր, թեթև ու սննդի արդյունաբերությունների համար նախատեսված հումք: Բուսական ծագմամբ արտադրանքի քանակական և որակական հատկանիշները կախված են ոչ միայն հողածածկույթի բնական առանձնահատկություններից, ինչը անկասկած ունի վճռորոշ դերակատարում, այլև հողօգտագործման արդյունավետությունից ու գյուղատնտեսական աշխատանքներ վարելու դարերով կուտակված ավանդույթներից և փորձառությունից:

Մարզում բուսաբուծության առաջատար ենթաճյուղը դաշտավարությունն է: Մարզում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 211 078.6 հա:


Աղյուսակ 1

Գյուղատնտեսական նշանակության հողերը [12]

	Գյուղ. նշանակության հողեր	այդ թվում				
		Վարելահողեր	Խոտհարքներ	Արոտներ	Բազմամյա տնկարկներ	Այլ հողատեսքեր
ՀՀ Շիրակի մարզը ընդամենը	211 078.6	78 163	9837.7	112 128.6	44.5	10905.1

78 163 հա վարելահողերից մշակվում է 70 765 հա, չմշակվող վարելահողերը կազմում են 7398 հա:

Ցանկատարածությունների զբաղեցրած մակերեսով առաջին տեղում են հացահատիկային կուլտուրաները:



Պատկեր 1 Շիրակի մարզի բուսաբուծությունը ըստ մշակաբույսերի [12]

Մարզի հիմնական մշակաբույսերի ընդհանուր ցանկատարածություններից հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերը զբաղեցնում են՝ 35.613հա, բերքատվությունը կազմում է՝ 30.8ց/հա, իսկ համախառն բերքը՝ 108.6 հզ տոննա: Հացահատիկային ցանկատարածությունները կենտրոնացված են Շիրակի դաշտում և մասամբ մարզի հարավային և հյուսիսային ոչ բարձրադիր շրջաններում: Հիմնականում մշակվում են՝ գարի և ցորեն (Հովունի, Վահրամաբերդ, Հացիկ, Մայիսյան, Գուսանազուղ, Արևիկ և այլն):

Շիրակի մարզը դարեր ի վեր դիտվել է որպես հացի շտեմարան: Մարզում գործում է Գյումրու «Սելեկցիոն Կայան» ՓԲԸ, որը որպես գիտաարտադրական ձեռնարկություն մեծ ներդրում է ունեցել և ունի մարզի ու հանրապետության գյուղատնտեսության բարձրորակ սերմացույով ապահովելու խնդիրը:

Մարզի հյուսիսային և հարավ-արևելյան բարձրադիր շրջաններում տարածվում են կերային կուլտուրաների ցանկատարածությունները: Զբաղեցնում են 30 276հա տարածք: Հիմնականում մշակվում են կորնզան (Լանջիկ, Փանիկ, Զրառատ և այլն) և վարսակ և առվույտ (Լոր Կյանք, Աշոցք, Պեմգաշեն և այլն):

Պալարապտղավոր մշակաբույսերից մարզում մշակվում է կարտոֆիլ:

Հարուստ փորձ է կուտակվել կարտոֆիլագործության զարգացման համար: Վերին տարիներին մարզում վարվում է ինտենսիվ կարտոֆիլագործություն: Այստեղ բավարար ուշադրություն է դարձվում սորտաթարմացմանը, ոռոգմանը, պարարտանյութերի թարմացմանը: Տարածված է Ախուրյանի ենթաշրջանում և Արթիկի ենթաշրջանի նախալեռնային հատվածում: Մարզում հիմնական մշակաբույսերի ընդհանուր ցանկատարածություններից կարտոֆիլը զբաղեցնում է 3221հա, 216.2 ց/հա կազմում է բերքատվությունը և 108.6հզ տոննա համախառն բերքը:

Կարտոֆիլի մշակությամբ հիմնականում զբաղվում են՝ Ազատանը, Լուսակերտը, Առափին, Գետքը, Ախուրյանը և այլ գյուղեր [11]:

Զգալի է բանջարանաբուստանային կուլտուրաների տեսակարար կշիռը: Դրանք զբաղեցնում են 1450հա տարածք: Այս կուլտուրաների համախառն բերքը կազմում է 31.5 հզ տոննա, իսկ բերքատվությունը՝ 216,8ց հա:

Բանջարանաբուստանային կուլտուրաների տարածման վերին սահմանը 2000մ բարձրությունն է, իսկ լավագույն պայմանները առկա են 1400-1600մ բարձրություններում, որպիսիք մարզում քիչ շատ քիչ մակերես են զբաղեցնում: Հիմնականում մշակում են՝ գազար (Մանթաշ), կաղամբ (Արևիկ, Ազատան, Կառնուտ և այլն), ծաղկակաղամբ (Ղարիբջանյան), սոխ (Ազատան), սեղանի ճակնդեղ (Արևշատ) և այլն:

Վերջին տարիներին արձանագրվել է նաև նոր մշակաբույսերի մշակության պրակտիկա: Մշակվել է կտավատ, որի ցանկատարածությունները կազմում են 92 հա, ոլոռինը՝ 38 հա, սիսեռինը՝ 28 հա, իսկ ոսպի ցանկատարածությունները՝ 47 հա են կազմում:

Այս մշակաբույսերի տնտեսական արդյունավետությունը մոտ 2-3 անգամ գերազանցում է հացահատիկային մշակաբույսերին: Աշխատանքներ են տարվում նաև սոյայի մշակության տեխնոլոգիայի ներդրման և տնտեսական արդյունավետության հաշվարկման ուղղությամբ:

Մշակաբույսերի մշակության արդյունավետության համար մարզում կան տեղադրված հակակարկտային կայաններ, իրականացվում է նաև կրծողների դեմ պայքար թունանյութերի միջոցով: Իրականացվում է մշակովի հողի պարարտացում՝ Ռուսաստանից, Իրանից և Վրաստանից ներկրված պարարտանյութերով:


Անասնապահության ճյուղի զարգացման նախադրյալները մարզում գնահատվում է բավականին բարձր: Գյուղատնտեսության այս ճյուղն ապահովում է ընտանի կենդանիների խնամքը և կենդանական ծագմամբ արտադրանքի ստացումը: Բացի այդ անասնապահությունը բուսաբուծությունը մատակարարում է օրգանական պարարտանյութեր, թեթև արդյունաբերությունը՝ հումք (բուրդ, կաշի և այլն) փոխադրումներին՝ քարշող ուժ (լծկան ձիեր և այլն) ազգաբնակչությունը՝ բարձր կալորիականությամբ սննդամթերք (ձու, կաթ, միս և այլն):

Անասնապահության զարգացումը սերտորեն կապված է բուսաբուծության հետ, քանի որ վերջինովս է պայմանավորված անասունների խնամքի կարևորագույն բաղադրիչը՝ կերային բազան:

Մարզում անասնապահության զարգացած ճյուղերն են՝ խոշոր և մանր եղջերավոր անասնապահությունը, խոզաբուծությունը, թռչնաբուծությունը, իսկ այլ ենթաճյուղերից հիմնականում զբաղվում են մեղվաբուծությամբ:

Մարզի անասնապահության հիմնական ուղղությունը կաթնամթերքի և մսամթերքի արտադրությունն է:

Խոշոր եղջերավոր անասնապահության ճյուղը առաջատարն է: Ներկայումս խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմում է 87.0 հազ. գլուխ, որից կովերինը կազմում է՝ 40.8 հազ գլուխ: Զարգանում է կաթնամսատու ուղղություններով: Զբաղվում են Կառնուտ, Այգաբաց, Գետք, Մանթաշ, Ջրառատ և այլ գյուղեր:



Դիագրամ 2 Շիրակի մարզի անասնապահությունը ըստ անասնատեսակների

Մանր եղջերավոր անասնապահության ենթաճյուղերն են՝ ոչխարաբուծությունը և այծաբուծությունը: Ոչխարների և այծերի գլխաքանակը կազմում է 764 հազ գլուխ: Զարգացած է ոչխարների մսաբրդակաթնատու ուղղությունը: Հատկանշական է, որ կրճատվում է այծերի գլխաքանակը, իսկ մի շարք անասնահոտերում ի սպառ քացակայում են: Մանր եղջերավոր անասնապահությամբ մարզում զբաղվում են՝ Հովունի, Մայիսյան, Հացիկ, Աշոցք, Ամասիա և այլ գյուղերում:

Մարզում խոզաբուծության զարգացման համար անհրաժեշտ է նպաստել տերական կերերի ավելացմանը: Խոզերի գլխաքանակը կազմում է՝ 20.2հազ.: Խոզաբուծությամբ զբաղվող գյուղերն են Առափին, Փանիկը, Երազգավորսը և այլ գյուղեր [13]:

Թռչնաբուծությունը ավանդաբար եղել է ամենաինտենսիվ կերպով զարգացող ճյուղերից մեկը: Տարածված է մարզի գրեթե բոլոր գյուղերում: Առկա է 270075 թև թռչուն:

Տարածված թռչնատեսակներն են հավեր, բադեր, սագեր, հնդկահավեր: Վերջին երեք տեսակները հիմնականում տարածված են Աշոցքի տարածաշրջանում:

Մեղվաբուծության զարգացման համար մարզում կան բարենպաստ բնակլիմայական պայմաններ:

Տարածքն ունենալով տարբեր գոտիներ՝ ցածրադիրից միջև բարձրադիր, ալպիական և մարգագետնային բուսածածկ, բարենպաստ է էկոլոգիապես մաքուր մեղր արտադրելու համար: Մարզում մեղվապահությամբ զբաղվում են՝ Ախուրյան, Սառնաղբյուր, Հացիկ և այլ գյուղերում: Կա 18.082 մեղվաընտանիք: Մարզի համայնքներում աշխատում են 111 անասնաբույժներ, որոնք աշխատանքային պայմանագրով իրականացնում են անասնաբուժական բոլոր միջոցառումները:

2.2 Շիրակի մարզի գյուղատնտեսությունը ՀՀ աշխատանքի աշխարհագրական բաժանման համակարգում

Շիրակի մարզի գյուղատնտեսական արտադրության զարգացման նպատակն է բավարարել գյուղատնտեսական մթերքների նկատմամբ բնակչության գյուղատնտեսական հումքի բազայի վրա աշխատող արդյունաբերական ձեռնարկությունների աճող պահանջունքները, նաև ապահովել գյուղատնտեսական արտադրության զարգացումը, գյուղատնտեսության համախառն ու ապրանքային արտադրանքի ծավալներում, դրանց տեսակարար կշիռների ավելացումը, որն էլ բնութագրում է գյուղատն-

տեսական արտադրության ճյուղային կառուցվածքը: Մարզում նշված պահանջների բավարարման համար գյուղատնտեսության զարգացման հիմնական խնդիրն է ապահովել գյուղատնտեսական արտադրության աճ, որի իրականացման համար անհրաժեշտ է բարձրացնել գյուղատնտեսական արտադրության կայունության մակարդակը, համակողմանիորեն ինտենսիվացնել արտադրությունը, մեքենայացնել արտադրական գործընթացները, ընդլայնել հողաբարելավման մասշտաբները, կատարելագործել արտադրության մասնագիտացման և համակենտրոնացման աստիճանը, բարելավել գյուղատնտեսական առանձին մթերքների արտադրության տեղաբաշխվածությունը, միջոցներ ձեռնարկել գյուղատնտեսական արտադրության արդյունավետության հետագա բարձրացման, գյուղատնտեսական հիմնական արտադրամիջոցի՝ հողի, գյուղատնտեսական տեխնիկայի և աշխատանքի արդյունավետ օգտագործման համար:

Շիրակի մարզում կան 30.221 գյուղացիական տնտեսություններ, որոնց միջոցով էլ կազմակերպվում է գյուղատնտեսական արտադրությունը: Դրանիցից 350-ը ֆերմերային տնտեսություններ են, որոնցից 61-ը զբաղվում է անասնապահությամբ, 150-ը՝ դաշտավարությամբ, 200-ը՝ մեղվաբուծությամբ, 50-ը գյուղմթերքի վերամշակմամբ (կաթ, միս, հացահատիկ), 39-ը՝ սերմարտադրությամբ [4]: Մարզի մեկ գյուղացիական տնտեսությանը և առևտրային կազմակերպությանը բաժին է ընկնում 7,4հա հողատեսք, որից վարելահող՝ 2,7հա, խոտհարք՝ 0,36հա, արոտ 3,94հա:

Մարզերում բավականին լուրջ հիմնախնդիր է գյուղատնտեսական արտադրության ռիսկայնությունը, որը հողերի չօգտագործման հիմնական պատճառներից մեկն է: Մարզում հաճախակի տեղի են ունենում բնական աղետներ, վաղ գարնանային հեղհեղումներ, ցրտահարություն, երաշտ, կարկտահարություն, հետևաբար ապահովագրական համակարգի ձևավորումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն: Համակարգի ներդրման դեպքում անհրաժեշտ է անպայմանորեն հաշվի առնել գյուղատնտեսական առանձնահատկությունները և գյուղատնտեսությունում տնտեսվարողների շահերը: Շիրակի մարզում գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմում է 97,9 մլրդ. դրամ, այդ թվում բուսաբուծությունը 35.5մլրդ. դրամ, իսկ անասնաբուծությունը՝ 62,4 մլրդ. դրամ: Տեսակարար կշիռը կազմում է 11%:

Հիմնական գյուղմթերքը՝ ցորենը, գյուղացիները վաճառում են մարզի այրադաց-ներին, ցորենի ընդունման կետերին, իսկ որոշ մասը օգտագործում են սեփական կա-րիքների բավարարման համար՝ այլուրի տեսքով: Կերային մշակաբույսերը օգտագոր-ծում են որպես անասնակեր, շատ քիչ մաս էլ վաճառում են ներքին շուկայում:

Կարտոֆիլը միջին գյուղացիական տնտեսությունները վաճառում են ներքին շուկայում, իսկ ֆերմերները հաճախ արտահանում են Վրաստան:

Բանջարանաբոստանային մշակաբույսերը նույնպես վաճառում են ներքին շուկայում:

Կաթը վաճառում են վերամշակողներին կամ միջնորդ անհատների: Մարզում գործում է կաթի վերամշակման ավելի քան 6 մասնագիտացված կազմակերպություն-ներ՝ «Իգիթ», «Բանդիվան կաթ», «Ալեքսպոլ», «Աշոցք պանրագործական», «Արդենիս կաթ», «Ամասիա Գլխավորող պանրագործարան», որոնց արտադրանքը սպառվում է հանրապետության շուկաներում և արտահանում են:

Ընկերություններից «Բանդիվան կաթ» ՍՊԸ ունի սեփական տոհմային անասնա-բուծական ֆերմա: Լինելով մայրաքաղաքից հեռու գործող արտադրական ձեռնար-կություններ մեծապես նպաստում են տարածաշրջանի տնտեսական զարգացմանը՝ տեղի բնակչության համար աշխատատեղեր ստեղծելով և օգնելով կաթի արտա-դրության ավելացմանն ու իրացմանը [20]: Միսը վաճառում են մսավաճառներին, որը իրացվում է ներքին շուկայում: Մարզում ոչխարաբուծության զարգացման նպատակ-ները պետք է վերաձևավորվեն շուկայի պահանջներին համապատասխան:

Քանի որ բրդի պահանջարկը շուկայում խիստ նվազել է, հետևաբար պետք է զարկ տալ մսակաթնատու տոհմային ոչխարների բազմացմանը:

Սա կբավարարի Հայաստանում ոչխարի և գառան մսի, ինչպես նաև պանրի մշակման պահանջարկը, կստեղծվի նաև արտահանման հեռանկարներ:

2.3 Շիրակի մարզի գյուղատնտեսության զարգացման հեռանկարները

Ժողովրդավարական տնտեսության մեջ գյուղատնտեսության դերն ու տեղն պահանջում են ճյուղի հետագա զարգացման համար իրականացնել մեծածավալ մի-ջոցառումներ, որոնք նախատեսում են երկրի տնտեսական ու սոցիալական զարգաց-ման հեռանկարային և ընթացիկ ծրագրերում:

Գյուղատնտեսաան համալիրի զարգացման արդի վիճակը և հեռանկարները մեծապես պայմանավորված են հողային ֆոնդի կառուցվածքով, հողաբարելավման միջոցառումների արդյունավետությամբ: Գյուղատնտեսության մեջ արտադրության գլխավոր միջոցը հողն է: Ճիշտ օգտագործման և հետևողական աշխատանքների դեպքում այն բարելավում է որակական հատկանիշները:

Շիրակի մարզում մեծ են սևահողերի տեսակարար կշիռը և նրանց դերը գյուղատնտեսական արտադրության մեջ: Հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրն անբաժանելի է բնապահպանական, էկոլոգիական խնդիրներից: Հողերի վատթարացման հիմնական պատճառներն են հողի էրոզիան, քարքարոտությունը, աղտոտվածությունը:

Ֆիզիկաշխարհագրական արտածին գործոնները: Սրանց ուժգնությունը շատ դեպքերում կախված է մարդու գործունեությունից, որն արտահայտվում է հողի կառավարման և մշակման պրոցեսում [2]:

Հողի էրոզիան թերևս նրա վատթարացման ամենատարածված ու ազդեցիկ գործոններից մեկն է [2]:

Շիրակի մարզում մակերևույթի համեմատաբար երիտասարդությունը, փոքր կտրտվածությունը, արմատական ապարների սակավ մերկացումները, նվազ թեքությունները, բավարար բուսածածկվածությունը հանգեցրել են բնական էրոզիայի թույլ արտահայտվածությանը [2]:

Բացառություն են կազմում Շիրակի և Փամբակի լեռնաշղթաների լանջերը, որտեղ սելավաբեր հեղեղատների առկայությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում տարածական ու գծային էրոզիայի համար: Սակայն նկատենք, որ Անիի, Արթիկի և Ախուրյանի տարածաշրջաններում հողերի անկանոն և ուժգին օգտագործման պայմաններում էրոզիայի երևույթն ստանում է ընդգծված արտահայտություն: Շիրակի մարզում իռիգացիոն էրոզիան հասնում է որոշակի զարգացման և պատճառ դառնում հողի սննդարար շերտի աղքատացման: Ոչ չափավոր և ոչ խելամիտ ոռոգման դեպքում իռիգացիոն էրոզիայի հետ մեկտեղ հողի մեխանիկական կազմում ավելանում են տղմային ֆրակցիաները, վատթարանում է ջրաթափանցությունը, տեղի են ունենում ջրում լուծվող աղերի վերընթաց և վարընթաց տեղատարման երևույթի արագացում, հողերի կլանող կոմպլեքսում կալցիումի պակասում, կեղևակալում և ցեմենտացում:

Այս ամենը հանգեցնում է հումուսի պարունակության պակասեցման և բերիության ցուցանիշների անկման:

Իռիգացիոն էրոզիայի դեմ պայքարելու համար ամենակարևորը բույսերի մշակման ագրոտեխնիկական կանոնների պահպանումն է: Նախ ոռոգման ժամանակ պետք է պահպանել տրված ջրի ծախսերը՝ մակերևույթի թեքության համապատասխան: Թեք լանջերում անհրաժեշտ է կարտոֆիլի, շաքարի ճակնդեղի և այլ լայնաշար մշակաբույսերի տակ դրված հողերում բազմամյա խոտաբույսերի միջոցով ստեղծել բուֆերային (չեզոք) էրոզաանվտանգ շերտեր [10]:

Դրանք հատկապես նպատակահարմար է առանձնացնել լանջի ստորին մասում՝ դաշտի եզրային հատվածներում: Կարտոֆիլի ցանքից հետո անհրաժեշտ է կատարել ցորենի մշակման համար սաղր հերկ, որպեսզի հողը հասցնի ամրանալ, սակայն 5-6 տարի անընդմեջ հացահատիկի ցանքը հողին կարող է նորից վնաս տալ՝ առաջացնելով անցանկալի պնդացում:

Հողի պնդացումը նույնպես վատթարացմանը հանգեցնող գործոն է, որի պատճառ է դառնում հողի ագրոֆիզիկական հատկությունների վատթարացման, որոնք ի վերջո անդրադառնում են նրա բերրիության ցուցանիշների վրա: Հողի պնդացումը կապված է մշակման ժամանակ երկար ժամկետով այն բազմամյա մշակաբույսերի տակ թողնելու, մակերևույթի վրայով անասունների հաճախակի տեղաշարժերի, տեխնիկայի օգտագործման հետ: Այս դեպքում պայքարի հիմնական միջոցը ցանքաշրջանառության ճիշտ իրակացումն է և համապատասխան մշակաբույսերի ընտրությունը: Հողերի վատթարացումը Շիրակի մարզում մեծապես նպաստում է երկրագործության վարման ներկայիս չհամակարգված պրակտիկան: Չեն պահպանվում գյուղատնտեսության մեջ պարտադիր համարվող ցանքաշրջանառության կանոնները:

Մարզում հաճախ 5-6 տարի անընդմեջ հողը դրվում է հացահատիկային մշակաբույսերի ցանքի տակ: Ընդ որում այդ ընթացքում չեն պահպանվում բույսերի խնամքի, հողի մշակման ագրոտեխնիկական կանոնները՝ հողի ամենամյա վար, մոլախոտերի հեռացում, պարարտացում: Արդյունքում կամ մեծանում է էրոզիան, կամ հողը պնդանում է, դառնում մոլախոտերի համար պարարտ դաշտ, հետևաբար նվազում է նրա բերրիությունը: Լինում է նաև հակառակը, երբ իրար հաջորդող մի քանի տարի շա-

բունակ դաշտն զբաղեցվում է միջշարանային մշակաբույսերով, որի դեպքում խախտվում է հողի կառուցվածքը, մեծանում է իռիգացիոն էռոզիայի ակտիվությունը:

Համատարած ցանք պահանջող մշակաբույսերի կանոնավոր հերթափոխությունը շարային մշակաբույսերի հետ, հնարավորություն էրնձեռում հողը ձերձ պահելու պնդացումից, ինչպես նաև հողում ապահովել նյութափոխանակության բնականոն ընթացքը: Համատարած ցանվող մշակաբույսերից հողի կառուցվածքայնությունը վերականգնվող մեծ ունակությամբ են օժտված առվույտը և կորնգանը, որոնք հողը հարստացնում են նաև ազոտով:

Սակայն հողերի զբաղվածությունը այս մշակաբույսերով չարաշահելու դեպքում դիտվում է պնդացում: Ցանքաշրջանառության մեջ նշված մշակաբույսերը հանդիսանում են հացահատիկային մշակաբույսերի լավագույն նախորդ, իսկ վերջիններս էլ՝ միջշարանային մշակաբույսերի: Շիրակի մարզի հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման ընդհանուր համակարգում առանձին կարևորություն ունի բնական կերահանդակների՝ խոտհարքների և արոտավայրերի պահպանման ու ներկա վատթարացող վիճակից դուրս բերելու խնդիրը:

Մարզում արոտավայրերն զբաղեցնում են զգալի տարածություն, որոնցից օգտվում են հանրապետության այլ մարզերի անասնապահները: Շիրակի արոտավայրերի մեծ մասը դասվում է հանրապետության լավ արոտների թվին [7]:

Այս իմաստով Շիրակի մարզի լեռնային արոտավայրերի և բուսական ռեսուրսների պահպանումը պետք է համարել ազգային հիմնահարց՝ ընդգծելով այստեղի արոտավայրերի և բուսական ռեսուրսների պահպանումը պետք է համարել ազգային հիմնահարց՝ ընդգծելով այստեղի արոտավայրերի բուսականության ինքնատիպությունն ու կենսաբազմազանությունը: Արոտավայրերի վատթարացման պատճառներն մի քանիսն են, որոնք կապված են հիմնականում դրանց ոչ ճիշտ օգտագործման հետ:

Մասնագետների կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ արոտավայրերը հիմնականում ծանրաբեռնված են: Միավոր մակերեսի վրա արածեցվող անասունների նորմատիվային գլխաքանակը Արագածի զանգվածում գերազանցում է 1.5-2.0 անգամ [1]: Գերբեռնված արածեցման դեպքում արոտավայրերում նախ՝ անասուններն լիարժեք չեն կիրառվում, ապա նրանց կճղակների տակ առաջանում են մերկացումներ, որոնք ուժգնացնում են հողալվացումը:

Ուսովող խոտատեսակը, հասկանալի է, առաջինն է դառնում խոցելի և տարեց-տարի, բնականոն վերարտադրություն չունենալով, աղքատանում է ու տեղն զիջում չուսովող, երբեմն էլ թունավոր խոտատեսակներին: Այս իմաստով առավել տուժում են գյուղամերձ արոտավայրերն, որտեղ անասուններն ավելի վաղ են սկսում արածել:

Հաճախ նույնիսկ խոտերի ծիլերը ոչնչացվում են, բույսերը չեն հասցնում սերմնակալել, ուստի չի ապահովվում դրանց վերարտադրությունը: Իսկ չուսովող խոտազանգվածը, լինելով որոշ չափով անձեռնմխելի, հայտնվում է բարենպաստ պայմաններում և դառնում է իշխող տեսակ: Բուսատեսակների վատթարացման գործընթացը տեսանելիորեն արտահայտվում է նաև Արագածի հատկապես Արևմտահայաց բնավայրերին մոտ լանջերին տեղաբաշխված արոտավայրերում:

Արոտավայրորի վատթարացման պատճառը գերբեռնվածության հետ միասին չհամակարգված, տարերային օգտագործումն է [7]:

Հայտնի է, որ արոտավայրերում գարունը ուշ է սկսվում և տևում է կարճ: Չյան ծածկից հողն ազատվում էջերմացած, իսկույն սկսվում են բուսականության աճն ու զարգացումը: Դա զուգադիպում է ցածրադիր արոտավայրերում ամռան սկզբին, և այդ ժամանակ է սկսվում է ամառային արոտային արածացման ժամանակաշրջանը:

Մատղաշ բուսականությունը հատկապես մանր եղջերավոր անասունների կճղակների տակ տրորովում է, տերևները վնասվում են, և խաթարվում է բուսականության զարգացումը:

Արոտավայրերում իսպառ բացակայում է հերթով արածեցումը, որով արոտների հանգիստ կտրվեր, միաժամանակ կամրանար բուսականությունը, կապահովվեր նրա զարգացումը, ուստի և կբարձրանար արոտավայրի արտադրողականությունը [3]:

Արոտավայրերի արդյունավետ օգտագործմանը անհրաժեշտ է նաև խնամք՝ ջրարբիացում, պարարտացում, ինչպես նաև չուսովող խոտազանգվածի ոչնչացում, որով էլ լուծվում է խոտածածկը լիարժեք պիտանի դարձնելու խնդիրը:

Արոտավայրերի բուսական համակեցության վատթարացման գործում, մեր կարծիքով չպետք է անտեսել առաջին հայացքից աննկատելի թվացող, բայց իրականում էական երկու հանգամանքներ: Առաջին՝ երթևեկության նպատակով տարբեր ուղղություններով արոտավայրերը հատող հիմնական և հատկապես երկրողական այն ճանապարհների տարեցտարի աճը, որոնք հետագայում դառնում են ակոսներ,

հեղեղների ու սելավային երևույթների առաջացման ուղիներ, ի վերջո երոզիայի նախապայման լինելով հանդերձ՝ պատճառ են դառնում հողալվացումների:

Երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ ամառային արածեցումների ժամանակ, հատկապես վարձակալման տրված տեղամասերում խփվում են վրաններ, ընդ որում, դրանց տեղերն էլ հաճախ են փոխվում:

Վրանների և անասունների գիշերելու տեղերը փոխելուց հետո բուսական համակեցությունն արագ վատթարանում է: Ուտվող, հյութեղ, համեղ շյուղախոտերը արագ փոխվում են ցողունավոր, կոշտ տարախոտերով, որոն ունեն լավ դիմադրողականություն բացասական պայմանների փոփոխության հանդեպ:

Արոտավայերից արդյունավետ օգտվելու համար պետք է բարձրացնել դրանց արտադրողականությունը, որը պայմանավորված է նախ խոտազանգվածի ավելացումով, ապա այդ համակեցության տեսական բարելավման, այսինքն՝ ուտվող զանգվածի տեսակարար կշռի մեծացմամբ: Անհրաժեշտ է արոտավայրերը սեփականատիրական իմաստով խիստ որոշակիացնել և օրենսդրորեն պահանջել դրանց պահպանման ու բարելավման իրականացումը:

Մշակվող հողերի որակի բարելավման համար անհրաժեշտ է պարարտացում: Նախկինում մեր հանրապետությունում արտադրում էին բավական չափով ազոտ պարունակող պարարտանյութ (կարբամիդ), նաև ներկրվում էր ազոտ, կալիում և ֆոսֆոր պարունակող պարարտանյութեր:

Այժմ Հայաստանում կարբամիդ չի արտադրվում, փոխարենը ներկրվում է այլ երկրներից:

Քիմիական պարարտանյութերը կարող ենք փոխարինել անօրգանական բնույթի սննդատարրերով, որոնք փոխարինվում են տարբեր եղանակներով վերամշակված գոմաղբում և այլ թափոններում (կենսահումուս, մեթանային խմորման կոնվերտ, կոմպոստ) առկա բաղադրիչներով: Այս դեպքում հողը ոչ միայն հարստանում է անհրաժեշտ սննդատարրերով, այլ նաև հումուսի առաջացման համար անհրաժեշտ բակտերիալ կազմով: Այսպիսի հողերում աճող բույսերը գրեթե կարիք չունեն քիմիկատների միջամտության, իսկ աճեցրած բերքը որակվում է որպես էկոլոգիապես մաքուր և հեշտությամբ գտնում է իր տեղը շուկայում:

Մարզի համայքներում լուրջ խնդիր է նաև ոռոգումը: Ոռոգման համակարգին մոտ գտնվող գյուղերը՝ շահում են, ծայրամասում գտնվողները տուժում:

Ոռոգման ցանցի քայքայվածության պատճառով օրինակ Մանթաշի ջրամբարից բաց թողնված ոռոգման ջրի ընդամենը 30 % է տեղ հասնում: Պետք է բարելավվի ջրման տեխնիկան՝ առայժմ ավանդական ոռոգման տեխնիկայի արդիականացմամբ: Պետք է հետզհետե անցում կատարել կաթիլային ոռոգման համակարգին:

Սակայն այս համակարգին անցում կատարելու համար գյուղացիները ֆինանսապես պատրաստ չեն: 1 հա հողատարածում կաթիլային ոռոգման համակարգ ներդնելն արժե 3000-5000 ԱՄՆ դոլար կախված՝ սարքավորումների որակից:

Լինելով իհարկե ոչ պակաս ծախսատար՝ կաթիլային համակարգը ապահովում է բարձր բերք և տնտեսում է տարածաշրջանում խնդիր համարվող ոռոգման ջուրը:

Ոռոգման համակարգի բարելավումը չի կարող տեղի ունենալ առանց լայն քննարկումների, որոնց պետք է մասնակցեն ֆերմերները, նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունները և տեղական կառավարման մարմինները:

Զարգացած երկրներում գյուղատնտեսությունը նշանակալի փոփոխությունների է ենթարկվել շնորհիվ ավտոմատացման, մեքենայացման և հետբերքահավաքի տեխնոլոգիաների կիրառմամբ: Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսություններում հիմնականում կիրառվում են մշակման ավանդական մեթոդներ:

Տեխնոլոգիաների օգտագործման ցածր մակարդակը երկարաժամկետ ռիսկ է հանդիսանում:

Պետական աջակցության մեխանիզմները նպատակաուղղվում են ոչ թե տեխնոլոգիաների փոխանցման վրա, այլ ներդրանքների (ջուր, դիզելային վառելիք, պարարտանյութ, ցորենի սերմացու, վարկերի տոկոսադրույք) հետ կապված ծախսերի սուբսիդավորման, ինչպես նաև պարբերական կատարվող գործողությունների իրականացման վրա: Հայաստանի Հանրապետության ագրարային համակարգը բավարարելու նպատակով կառավարությունը պետք է կենտրոնանա միջավայրի բարելավման և խթանման, ներդրումային աջակցող ինստիտուտների ուժեղացման և քաղաքականության բարեփոխումների վրա: Օտարերկրյա ներդրումները կարող են հանդիսանալ ոչ միայն կապիտալի ներգրավման առումով լավ միջոց, այլ նաև՝ գիտելիքի, փորձառության, տեխնոլոգիաների և նոր շուկաների: Բացի այդ տեղի բնակչությունը կարող

է օգտվել ոչ միայն նոր աշխատատեղերի առկայությունից այլ նաև որակի բարձրացումից, անվտանգության և ավելի շահավետ գնագոյացումից:

Շիրակի մարզի գյուղական համայնքների ագրարային զարգացումը կնպաստի բնակչության աղքատության կրճատմանը, ուրբանիզացիոն միտումների նվազեցմանը, արտագաղթի դադարեցմանը, սեցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը և այլն: Գյուղական համայնքների բնակչության բարեկեցության բարձրացման հիմնական գրավականը զարգացած ագրարային ոլորտն է, որն էլ պետության զարգացման հիմքն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ավարտական աշխատանքի շրջանակներում կատարած հետազոտության արդյունքները կարելի է ներկայացնել ներքոհիշյալ եզրակացությունների ու առաջարկությունների միջոցով.

Եզրակացություններ

- Շիրակի մարզի բնառեսուրսային ներուժի գնահատումը թույլ է տալիս հաստատել այն պնդումը, որ Շիրակի մարզն առանձնանում է բազմաձյուղ գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ ներուժով:
- Չնայած վերջին տարիներին կոռուկցիայի և գյուղացիական տնտեսությունների խոշորացման որոշակի միտումներին, դեռևս բարձր է մնում փոքր, խիստ մասնատված գյուղացիական տնտեսությունների մասնաբաժինը, որի պատճառով ցածր է մնում ինտենսիվացման գործընթացի տեմպերը:
- Գյուղատնտեսության ոլորտում մարզի ներուժի և զարգացման առկա մակարդակի համադրումը, թույլ է տալիս պնդել, որ ոչ միայն ողջ ներուժը չի օգտագործվում, այլև հաճախ ռեսուրսներն օգտագործվում են ոչ արդյունավետ, մասնավորապես`
- ✓ Համեմատաբար բարձր է չօգտագործվող գյուղատնտեսական հողահանդակների մակերեսը,
- ✓ Ե՛վ անասնապահության մեջ, և՛ հողագործության մեջ լիարժեք չի օգտագործվում ինտենսիվացման ողջ ներուժը: Արդյունքում անհատական գյուղացիական տնտեսություններում ցածր է բերքատվության և մթերատվության ցուցանիշները:
- ✓ Ակտիվ շրջանառության մեջ գտնվող հողահանդակներում մեծ մասնաբաժին ունեն ցածր արտադրողականություն ունեցող մշակաբույսերը, որը հաճախ ավանդույթի և այլնտրանքի բացակայության պատճառով է: Այսինքն, նոր, շուկայում մեծ պահաջարկ և գին ունեցող մշակաբույսերի ներդրումն ընթանում է ցածր տեմպերով:
- Գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող գործոններից կարելի է նշել, մարզում գյուղատնտեսական հումքի վերամշակման ձեռնարկությունների թույլ ցանցի առկայությունը:

- Եվ ամբողջ հանրապետության, և հատկապես՝ Շիրակի մարզում գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը խոչընդոտող գլխավոր գործոնը մնում է բարձր ռիսկայնությունը, որը վերաբերում է ինչպես՝ բնական այնպես էլ հասարակական բաղադրիչին: Մասնավորապես, բնական աղետներ, ցրտահարության և կարկտահարության խիստ բարձր վտանգ, շուկային սահմանափակություն, շուկայում գյումթերքների գնագոյացման ոչ կայուն մեխանիզմներ, հանրապետության ֆինանսավարկային և դրամական քաղաքականության ցածր հուսալիություն:
- Չնայած վերը բացահայատված խնդիրներին, այնուամենայնիվ, հանրապետության աշխատանքի աշխարհագրական բաժանման վերլուծության տեսանկյունից կարելի է հիմնավորապես պնդել, որ մարզի գյուղատնտեսական ողջ ներուժի իրացման արդյունքում կարող է դառնալ հանրապետության պարենային անվտանգության ապահովման կարևորագույն օղակը:

Առաջարկություններ.

- Պետական հստակ քաղաքականությամբ պետք է բարելավել գյուղատնտեսության ոլորտի արտադրողականությունը, շուկայի արդյուավետությունը, նաև պարենային անվտանգության և որակի չափորոշիչները:
- Պետական հստակ քաղաքականությամբ պետք է ապահովվի գյուղատնտեսական արտադրանքի ռեսուրսների արդյունավետ օգտագործում՝ համագործակցության տարբեր տեսակների, առաջնային արտադրվող և վերամշակվող կողմերի միավորման, նոր տեխնոլոգիաների ներդրման և այլնի միջոցով:
- Պետական հստակ քաղաքականությամբ արտոնյալ պայմաններ պետք է ապահովվի գյուղատնտեսական հումքի, հատկապես՝ կաշվի, բրդի, մորթու վերամշակմամբ զբաղվող ընկերությունների գործունեության համար:
- Պետական հստակ քաղաքականությամբ պետք է ապահովվի մարզի գյուղտեխնիկայի թարմացումը, նպատակային պետք է դառնա կարկտակայանների տեղադրումը և դրանց քանակի ավելացումը:
- Պետական հստակ աջակցությամբ աստիճանաբար պետք է ներդրվի գյուղտնտեսական ապահովագրության մեխանիզմներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավետիսյան Գ.Ռ., Շիրակի մարզի հողերի պահպանության և հողաբարելավման խնդիրները, Գյումրի, 2014, էջ 231:
2. Գաբրիելյան Հ.Կ., Միրիմանյան Խ.Պ., Հողի էրոզիան և պայքարը նրա դեմ, Երևան, 1974, էջ 172:
3. Խոյեցյան Ա., Հակոբյան Ք., Շիրակի մարզի հողերը և նրանց ռացիոնալ օգտագործման ուղիները, Հանր. Գիտ. Նստ. Նվիրված երկրաշարժի տասնամյա տարելիցին, Գյումրի, 1999, էջ 262-264:
4. ՀՀ մարզերի գյուղատնտեսության մասնագիտական ուղղվածությունները և արտադրատեխնիկական ցուցանիշների վերլուծությունը, Երևան 2018, էջ 24:
5. Հայկական ՍՍՀ Ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1971, էջ 41:
6. Մարտիրոսյան Լ., Նազարյան Խ., Նահապետյան Ա., Շիրակի մարզի գյուղատնտեսության աշխարհագրություն, Երևան 2001, էջ 45:
7. Մարտիրոսյան Լ.Մ., Պողոսյան Դ.Ա., Նահապետյան Ա.Գ., Վալեայան Լ.Հ., Շիրակի մարզի գյուղատնտեսության աշխարհագրություն, Երևան, 2000 էջ 140:
8. Վալեայան Լ.Հ., Հայկական ՍՍՀ տնտեսական աշխարհագրություն, Երևան, 1981, էջ 28:
9. Климатический атлас Арм ССР, Ереван, 1991, стр 32-36.
10. Симонян М.М., Тунян Р.В. и др. Плодородие эродированных горных черноземов и почвозащитная роль полевых культур, НИИЗ, сб. научн. Тр. Ереван, 1978., стр 3-10.

Էլեկտրոնային աղբյուրներ

11. center.gjumri.info
12. shirak.mtad.am
13. www.irtek.am